

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ  
պատմական գիտ. թեևնածու

## ՓԱՐԱՔԱՐ. ԳՅՈՒՂԱ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Փարաքար (Շիրաբադ, Շիրաբաթ, Շիրապատ, Պարակար) գյուղը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում՝ Վաղարշապատից 9 կմ արևելք, Երևան քաղաքից հարավ-արևմուտք՝ Երևան-Վաղարշապատ մայրուղու վրա: Այն նախկինում մտել է Երևանի նահանգի Երևան գավառի մեջ և կոչվել Շիրաբադ: Բնակչության մի մասի նախնիները եկել են 1828-1829 թթ. Սալմաստից և Խոյից: Գյուղն ունի կավահանք, որն անվանվել է նաև փրփրաքարի հանք. հենց այս բառի աղավաղումից է, հավանաբար, առաջացել է Փարաքար անունը<sup>1</sup>: Ըստ Մեարուպ Թաղիաղյանի՝ գյուղն իր անունն ստացել է տեղի կավօճարի հանքի անունից, «...զոր զի կոչեն Պարսկերեն, որ այն զի՝ որպէս օճառ փրփրայ, և ինքն որպէս քար է, վասն որոյ և ես ի Փրփրաքար ստուգաբանեցի, յոր և անուանակոչեալ իսկ հանարին»<sup>2</sup>:

Փարաքարը մատենագրական աղբյուրներում հիշատակվում է ԺԷ. Դարիից: Գյուղի պատմության մի ուշագրավ դրվագ է հիշատակում Զաքարիա Սարկավագը: Ծահ Աբասի կազմակերպած բննագաղթի (1604 թ.) արյունքում Հայաստանում մի շարք բնակավայրեր դատարկվեցին, որի հետևանքով իշխող պարսիկ վերնախավը ստիպված էր միջոցներ ձեռնարկել երկրի սոցիալ-տնտեսական դրությունը բարելավելու ուղղությամբ: Հենց այդ նպատակին էին միտված արշավանքները դեպի Վան, Մուշ, Էրզրում՝ կազմակերպված Երևանի կառավարիչ Ամիրգունա խանի (1605-1625) կողմից, որին Զաքարիա Սարկավագը բնութագրում է իրքն «այր քաջ՝ և սրտապինդ՝ և արի՝ ի պատերազմունս, անահ և աներկիւտ, շնարար և սիրող քրիստոնէից»<sup>3</sup>: Նկարագրելով խանի քաջագործությունները «ընդ դէմ Օսմանցւոցն»՝ Զաքարիա պատմագիրը հավելում է, որ նա «...զնաց զկողմամբն Վանայ և Մշոյ, և գերեալ զնոսա՝ երեր զգերիսն և բնակեցոյց ի նահանգսն, որ ի մեջ Երևանու ի դաշտ: Քանզի գեղորայքն՝ որ ի մեջ Երևանայ և Էջմիածնայ են, այսինքն՝ Քալար, Գոկումբէթ, Կաւակերտ, Փարաքար, Սապատ, և այլք՝

1 Տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Քախչյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001, էջ 243:

2 Տե՛ս Մ. Թաղիաղյան, Ուղեգրություններ, հոդածներ, նամակներ, վավերագրեր, Եր., 1975, էջ 40-41:

3 «Զաքարիա Սարկավագի պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870, էջ 45:

որք գերեաց ի գաւառացն Օսմանցւոց, բերեալ բնակեցոյց յայսմ գեղորայս. և ահա կան շեն մինչև ցայժմ»<sup>4</sup>:

1652 թ. Նորքում գրված Մաշտոցյան Մատենադարանի թ. 6231 «Յայսմաւորքի»-ի հիշատակարաններից մեկում կարդում ենք, որ պատվիրատու-ստացող խոշա Գրիգորը, որ էր «...սա ի յԱյրարատեան ի գիւղաքաղաքէն Երևանայ, որդի Արզումքէկի, որդոյ Սիմեոնի, որ մականուն Մոնակ կոչի:...ածեալ զգործ վաճառականութեան յուսացեալ յԱստուած և յաջողութիւն նորա»<sup>5</sup>: Քսան տարի շրջագայելով և Լեհաստանում վաճառականությամբ զբաղվելով՝ Գրիգորը «...եկն եհաս ի բնիկ յերկիրն իւր յԱյրարատ... և յԵրևանու քաղաքիս մուլքն ազատեալ վախս արար յիշատակ իւրն և ծնողացն իւրոց: Եւ շինեաց զԿաթուղիկի եկեղեցոյ ժամատուն ի հմանց բազում ծախիւր և ետ ընծայս եկեղեցոյ մեկ Յայսմաւոր... Ա. (1) կամուրճ շինեաց Փարաքարայ ջրին վերայ... և Աստուած վարձահատոյց լիցի ի յաւորն դատաստանին. ամէն»<sup>6</sup>:

Մ. Թաղիայյանը ևս հիշատակություն ունի Փարաքարի շրանցքի վերաբերյալ, որ «...հանեալ ի Հրադանայ՝ որ թէ և չոր զարդիս՝ Երևի մինչև ցայսօր ժամանակ սկսեալ ի Ծակ քարէն՝ որ ի ներքոյ Ծիծառնաբերդին և ընդ Երեքբուրն անցեալ՝ որ կոչին Խոչ Թափէ, առ ի շեղ ճանապարհին՝ ընդ Փարաքար գիւղ կամ «Փրկիրաքար» գայր գեղոյր ի «լիճն Քահանայի» և արգաւանդէր զՎարապարն աւազախտիս...»<sup>7</sup>:

Զեռագրական մեկ այլ հիշատակություն է պահպանվել Մաշտոցյան Մատենադարանիթ. 444 ձեռագրում, որ բովանդակությամբ «Խորհրդատետր» է: Այն գրվել է 1681 թ. Ա. Էջմիածնում, Գրիգոր Երևանցի գրի կողմից: Մատյանի պատվիրատուն Սօլթանն է, որն այն նվիրել է հանգուցյալ ամուսին Յոհանի հիշատակին և ձեռագիրն ընծայել Փարաքարի Ա. Հարություն եկեղեցուն: Զեռագրի գրչության հիշատակարանում կարդում ենք. «Արդ, ցանկացօղ եղի այս հոգենորդ բուրաստանի բարեմիտ կինն Սօլթան և ստացաւ զա յիշատակ հոգոյ առն իւրոյ Յոհանին՝ նոր վերափոխելոյն ի Քրիստոս, որ է որդի Թումանին, և ետ զա յիշատակ Սուրբ Յարութիւն եկեղեցույ, որ ի գեղջիս Փարաքարայ»<sup>8</sup>: Այնուհետև հիշատակվում են Սօլթանի կողակից Յոհանի ծնողներ Թումանն ու Բեկը, նրանց որդիներ Թումանջանը, Ավանը, Թորոսը և դրատը՝ Վարդիխաթունը: Հիշատակարանը կարևոր է նրանով, որ այն արժանահավատ սկզբնաղբյուր է Ա. Հարություն եկեղեցու՝ տվյալ ժամանակաշրջանի պատմության համար, սակայն պարզ չէ՝ խոսքը

4 Ան, էջ 46:

5 «ԺԷ. դարի ձեռագրերի հիշատակարաններ», հ. Գ, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1984, էջ 500-501: 6 Ան:

7 Տե՛ս Մ. Թաղիայյան, նշվ. աշխ., էջ 40-41:

8 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Բ., կազմեցին՝ Օ. Եղանեան, Ա. Զեյթունեան, Փ. Անթաքեան, Ա. Քեռչիերեան, Երևան, 2004, էջ 718:

ներկայիս Ս. Հարություն Եկեղեցու մասին է, թե Ս. Աստվածածնի, որն ըստ շինարարական արձանագրության՝ նախկինում ևս Ս. Հարություն է կոչվել:

Իբրև Ս. Վթոռի նվիրակական և առաջնորդական վիճակ (տերունի), Սիմեոն Երևանցի (1763-1780) Կաթողիկոսը Երևանի տարածքի մի շարք գյուղերի կազմում հիշատակում է նաև Փարաքարը. «Երևանի տարածքում (կան) մի քանի գյուղեր, որոնք հետևյալներն են՝ մեր այս Էջմիածին գյուղը, որ կից է Ս. Վթոռին, Եղվարդ, Օշական, Ալիբեկլու, Դողս, Փարաքար...»<sup>9</sup>: Փիլիպոս Ա Աղբակեցի (1632-1655) Կաթողիկոսը 1636 թ. Ս. Վթոռի սեփականություն է դարձնում փարաքարցի Աքրահամ Վարդապետին պատկանող մի այգի, որի սահմաններն են. «Սաֆարի այգին, Փարաքարի մեծ առուն, որ Զանգու գետից գալով անցնում է գյուղի վերևի մասով, մելիք Յաղութի այգին եւ Այլազի առվույտի դաշտը»<sup>10</sup>: 1665 թ. Հակոբ Դ. Զուղայեցի (1655-1680) Կաթողիկոսը հիշյալ այգուն կից գնում է ևս երկուսը: Հետագայում Ս. Վթոռին այգիներ են վաճառում գյուղի բնակիչներից շատերը, իսկ կաթողիկոսները դրանք իրար միացնելով դարձնում են ամբողջական եւ պարսպապատում: Սիմեոն Երևանցին իր ժամանակ դրանք հիշատակում է «ավերված, ինչպես գյուղի բոլոր այգիները»<sup>11</sup>:

Փարաքարից Ս. Վթոռին այգիներ են հատկացվել նաև գյուղացիների ցանկությամբ՝ իբրև նվիրատվություն: Օրինակ, փարաքարցի Պետրոսի որդի Ղարազյոզն ու իր ընտանիքը Հակոբ Զուղայեցու օրոք՝ 1670 թ., մի այգի են տալիս Մայր Վթոռին՝ ի հիշատակ, կամ Մարկոսի դուստր Եղսումը Աղեքսանդր Զուղայեցու (1706-1714) օրոք՝ 1713 թ. «մի այգի են տալիս Սուրբ Վթոռին՝ ի հիշատակ, որը երեք տախտակի (չափով) է, եւ որի սահմաններն են՝ Մուղնու վանքի, Տեր Ստեփանոսի, Մինասի եւ Սարգսի այգիները»<sup>12</sup>:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը քանից հիշատակում է Փարաքարը. դրանցից մեկն առնչվում է 1826-1828 թթ. ոուս-պարսկական ընդիարումների ու գեներալ Պասկիչի կողմից Երևանի բերդի գրավման հետ: Պարենի բացակայության պատճառով Պասկիչը դիմում է Ներսես Աշտարակեցուն (1843-1857)` ցարական զորքերին օգնություն ցուցաբերելու նպատակով: Ի պատասխան Պասկիչին՝ «Ներսէս Երասխը անցավ, Պարսիկներուն ձեռքէն քանի մը հազար բեռ ցորեն ու գարի խեց, եւ Աշտարակէ, Օշականէ ու Փարաքարէ բռնի տարուած քանի մը հարիւր հայ ընտանիքներն ալ միասին առնելով սեպտեմբեր 12-ին Պասեւիչի միացաւ»<sup>13</sup>:

Փարաքարը հիշատակվում է նաև 1735 թ. Նադիր շահի արշավանքների

9 Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, Զամրո, Երևան, 2003, էջ 70:

10 Անդ, էջ 244-245:


11 Անդ, էջ 246:

12 Անդ:

13 Տե՛ս Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Գ, Երևան, 2001, էջ 4044-4045, տե՛ս նաև Լին, Հայոց պատմություն, տրորդ հատոր, Երևան, 1984, էջ 424:



Նկ. 1 Ս. Աստվածածին եկեղեցին



Նկ. 3 Ս. Աստվածածին եկեղեցու հարավային մուտքի արձանագրությունը



Նկ. 2 Ս. Զարություն եկեղեցին



Նկ. 4 Ս. Աստվածածին եկեղեցու հարավային մուտքի բարափորի արձանագրությունները



Նկ. 5 Խաչքար, ԺԷ-ԺԸ դդ.



Նկ. 6 Խաչքանդակ քար,  
1825 թ.



Նկ. 7 Արձանագիր քար,  
ԺՄդ.



Նկ. 8 Խաչքար,  
Ժ-Ժ դդ.



Նկ. 9  
Խաչքար, Ժ դ.



Նկ. 10  
Ս. Զարություն եկեղեցու գերեզմանոցը

առնչությամբ, երբ պարենի բացակայության պատճառով շահը ստիպված էր «...Ազարանի կողմը դառնալ եւ Արարատի դաշտը իջնել... այս անգամ իր վրանը փոխադրած էր Փարաքարի վրայ»<sup>14</sup>: Արահամ Կրետացու «Պատմութեան» «Յաղագս յդելոյ զիրայինքն ի վանքն և գնալն ի Փարագար և Եղուարդ» գլխում խոսվում է շահի՝ Էջմիածին կատարած այցելության մասին. «Եկա եւ ինքն կրկին անգամ ի լուսանալն: Եւ ուրախացեալ ի մեջ տաճարին գուարճացոյց զիրայինքն...: Եւ մտրակեալ գերիվարն գնաց խաղաղութեամբ և սիրով զճանապարհն իր ի վերայ Փարագարու և անդ բանակեցաւ: Եւ ես (Արահամ Կրետացի Կաթողիկոսը - Ա. Հ.) ի նոյն օրն զկնի իր գնացի ի բանակն ի Փարագար սակա ընծայիք»<sup>15</sup>:

Փարաքարի նշանակությունը մեծապես կարևորվում է հատկապես հնագիտական տեսանկյունից: Դեռևս 1952 թ. փետրվարին, զյուղի տարածքից, հողային աշխատանքների ընթացքում, հայտնաբերվել է բրոնզե կացին (մ.թ.ա. XII-XI), որը «...имеет обушок со слегка выпуклой молоточкой частью и расширенное в одну нижнюю сторону лезвие»<sup>16</sup>, իսկ 1959 թ. ապրիլի 27-ին, զյուղի հնամյա շինության փլատակների մեջ գտնվել է Արտավազդ Բ. (մ.թ.ա. 56-34) թագավորի մի արձաթե դրամ՝ բավական լավ պահպանված վիճակում: Այն իր կշռային չափով (14,85 գրամ) չորեղբամյան է: Չափավելով դրամի պատկերագրության ու արձանագրությունների քննության վրա, ինչը մանրամասն վերլուծել է Խ. Մուշեղյանը, միայն նշենք, որ հստակ պահպանվել են դրամի տարեթիվն արտահայտող «II» գրերը, որոնք ցույց են տալիս, որ դրամը թողարկվել է Արտավազդի իշխանության Ժ. տարում, այսինքն՝ մ.թ.ա. 37 թ.<sup>17</sup>:

Գյուղի հին հուշարձաններից մեկը, որը բնակատեղի է, գտնվում է օդանավակայանի հարևանությամբ՝ ոչ մեծ բլուրների վրա, իսկ մյուսը, որ պեղվել է 1961 թ. ակադ. Բ. Առաքելյանի ղեկավարությամբ, անվանի հնագետ Գ. Տիրացյանի, ճարտարապետ Ալ. Սահինյանի և հնագետ Ժ. Խաչատրյանի մասնակցությամբ, աշտարակածն դամբարան-մեխյան է, որը գտնվում է Երևան - Վաղարշապատ մայրուղու աջ կողմում՝ բարձունքի վրա<sup>18</sup>: Զնայած

14 Տե՛ս Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Երևան, 2001, էջ 3338, 3340:

15 Արահամ Կրետացի, Պատմություն, քննական բնագիր, ուսուեն թարգմանություն և ծանոթագրություններ՝ Ն. Կ. Դորիանյանի, Երևան, 1973, էջ 54-55:

16 Ա. Ա. Մարտրօսյան, Արմենիա և առողջ բրոնզ և բարձրաքանակ պատմություն, Երևան, 1964, ս. 124.

17 Տե՛ս Խ. Մուշեղյան, Արտավազդ Ա-ի տարեղբամյանը, ՊԲՀ, 1964, թ. 2, էջ 317-323:

18 Դեռևս 1958 թ., բարձունքի բարե շինության ավերակների ջրակայրում գտնվել է նաև մի բարձրելոր (սահմանաբար)՝ արձանագրության հետքերով: Շինությունը բաղկացած է բարե մի հարթակից, որի մեջտեղում բարձրանում են աշտարակի պատերի մնացորդները (1-1,20 մ բարձրությամբ): Սենյակի մեջտեղում բացվել է օվալաձև գերեզման (1,50 x 1,10 մ), արևելիք-արևմտաց ուղղությամբ: Վշտարակածն շինություններ հայտնի են դեռևս ուրարտական ժամանակաշրջանից, մասնավորապես՝ ուրարտական ամրոցների ու բաղաբերի պարապատառն համակարգի մեջ մտնող աշտարակները, սակայն նմանատիպ շինություններ Հայաստանում վկայակորչվում են նաև վաղ հայկական ու Արեմենյան ժամանակաշրջանում: Տե՛ս Գ. Տիրացյան, Փարաքարի աշտարակածն դամբարանը և նման

օվալաձև գերեզմաններ հանդիպում են նաև վաղ շրջանում և թվագրվում II հազարամյակի վերջով ու I հազարամյակի սկզբով, այդուհանդերձ Կարմիր բլուրի քաղաքային թաղամասի, ինչպես նաև Գառնիի օվալաձև գերեզմանների պես Փարաքարի աշտարակաձև դամբարանը գրադարձնում է իր ուրույն «...տեղը հայկական հելլենիստական մշակույթի մեջ, որի էությունն ու բովանդակությունը շոշափող կնճռու հարցերից է տեղական և հելլենական հոսանքների փոխհարաբերությունը»<sup>19</sup>: Այսինքն, այս իրողությունը փաստում է գյուղի՝ որպես բնակավայրի՝ առնվազն մ.թ.ա. Գ.-Բ. դդ. գոյություն ունենալու հանգամանքը:

Պեղումների ընթացքում հայտնաբերվել է նաև յոթ արծաթե դրամ. երեքը հայկական՝ Տիգրան Մեծի (մ.թ.ա. 90-55) դիմանկարով և հունարեն համապատասխան արձանագրություններով, մեկը պարթևական՝ Օրողես Բ. արքայի (մ.թ.ա. 57-37) և երեքը՝ հոռմեական հանրապետության (մ.թ.ա. 80-70-ական թթ.)<sup>20</sup>:

Գյուղի պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերն առավել հանգամանալից ներկայացրել է Ս. Միրզոյանը<sup>21</sup>: Նա նշում է, որ վերոնշյալ հուշարձանների ուսումնասիրությամբ գրադարձ է հնագետ Գր. Կարախանյանը, որի կարծիքով՝ «...օպանավակայանի հարևանությամբ բնակատեղին գոյատևել է մինչև վաղ միջնադար, որից հետո (շարունակաբար) հաջորդ բնակատեղին Փարաքար գյուղն է»<sup>22</sup>:

Անդրադարձը Փարաքարին ու հատկապես տեղի եկեղեցիներին, պայմանավորված է այցելությունների ժամանակ՝ մեր գրառած մի քանի վիմագրերով, որոնք ցարդ ուսումնասիրված չեն: Վրձանագրությունների մեծ մասը տապանագրեր են: Նորահայտ վիմագրական նյութն ատիք հանդիսացավ ներկայացնելու Փարաքար գյուղի ու նրա եկեղեցիների պատմությունը, հոգևոր ու մշակութային անցքերը:

Փարաքարում կա գործող երկու եկեղեցի՝ Ս. Աստվածածին և Ս. Հարություն (նկ. 1, 2): Առաջինը գտնվում է գյուղի կենտրոնական մասում: Այն նախկինում կոչվել է Ս. Հարություն, ինչի մասին է վկայում հարավային մուտքի ճակատային մասում առկա քառատող շինարարական արձանագրությունը.

Ի ՀԱՅՐ Ա.Դ. ՏՌՈՒԹԵՍՆ Տ. ՃՆԵՐՍԻՍԻ ԱՇՏԱՐԱ  
ԿԵՑՔՈՅ ԵՐԱՌԻ ՇԽՆԵՑԱՒ ՄՔ ՑԱՐՈՒԹՎԱԿԱՆ ՎԵՑԻ ՎԵ  
ՐԱՏՍՉՈՐՔ Դ. ՓԻԼ ՊՂՈՍԻ ՏՐԱՏԹԷՌՈՍԵՆՑ ԱՐԴԵՄԲՔ  
ԲԱՐԵ ԱՆ ՃՈՂՈՎՐ ԴԻՑ ՓԱՐԱՔԱՐՈՒ 1855 Ա.Ի

հուշարձանները Հայաստանում և Առաջավոր Ասիայում, ԲԵՀ, 1970, թ. 1, էջ 229-239:

19 Տե՛ս անդ, էջ 239:

20 Տե՛ս անդ, էջ 230:

21 Տե՛ս Սովորն Միրզոյան, Փարաքար, Վրմավիր, 2005:

22 Տե՛ս անդ, էջ 18:

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՆԵՐՍԻՒՄ ԱՇՏԱՐԱՎ/ԿԵՑԻՉ Ե (5)-ՐԴԻ, ՇԻՆԵՑՎԱ  
ՄԲ ՅԱՐՈՒԹ ԼԻ Ն ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՎԵՐԱՏ Ե ՍՉՈՒ ԹԵԱՄ Բ Պ ԱՐՈՆ  
ՓԻԼԻՊՈՂՈՍԻ ՏՌ ՄԱՏԹԵՈՍԱՆՑ, ԱՐԴԱՎԱՐԱՔ ԲԱՐԵՊԱՇՏ ԺՈՂՈՎՐԴԻՑ  
ՓԱՐԱՔԱՐՈՒ, 1855 ԱՄԻ<sup>23</sup>:


## Նկ. 3

Ըստ Վկայագիր՝ Եկեղեցին կառուցվել է Ներսէս Ե. Աշոտակեցի Կաթողիկոսի օրոք՝ 1855 թ., Փիլիպպոս Տեր-Մաթևոսյանցի «Վերատեսչությամբ» և փարաքարցիների միջոցներով: Եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Պարթև քահանա Աշուրյանի հաղորդմամբ՝ Փիլիպպոս Տեր-Մաթևոսյանցը ժամանակի նշանավոր քարերաբներից է եղել, որի միջոցներով Փարաքարում կառուցվել է ոչ միայն Եկեղեցի, այլև դպրոց, կամուրջ:

Ս. Աստվածածին Եկեղեցին եռանակ քազիիկ կառույց է, ունի երկու մուտք՝ արևմտյան և հարավային կողմերից: Ավագ խորանի աջ և ձախ կողմում ուղղանկյուն ավանդատներն են: Եկեղեցին նորոգվել է նախ 1982 թ., համայնքի ուժերով, ապա վերակառուցվել 2001-2002 թթ., քարերաք Հովհաննես Երիցյանի միջոցներով՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինությամբ:

Հիշյալ աշխատանքները բովանդակող արձանագրությունները հարավային մուտքի քարավիրին են, որտեղ Եկեղեցին կոչվում է Ս. Աստվածածին:

«Ս. Մարիամ Աստվածածին Եկեղեցին վերանորոգվել է 1982 թվին համայնքի ուժերով», «Երանի Եկեղեցի շինողաց. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. կաթողիկոսի օրինությամբ 2001-02 թթ. Վերակառուցվեց քարերաք Հովհաննես Երիցյանի կողմից» (նկ. 4):



Ըստ Էռլյան՝ առաջին վերանորոգումից հետո Եկեղեցին վերածվել է Ս. Աստվածածին անոնով, քանի որ Ս. Հարություն անվամբ մեկ այլ Եկեղեցի էլ գտնվում է մայրուղու աջ կողմում, որին կանդրադառնանք ստորև:

*Ս. Աստվածածին Եկեղեցու  
հատակագիծը<sup>24</sup>*


Ս. Աստվածածին Եկեղեցու վերանորոգումների ժամանակ պահպանվել են հարավային շքամուտքը, պատուհանների պսակները, արևմտյան մուտքի քարավորը և այլն: Եկեղեցու աջ ավանդատնյակի խորանում դրված են ԺԷ.-ԺԹ. դր. մի քանի խաչքարեր<sup>25</sup> և մի արձանագիր քարաբեկոր:

23 Ան, էջ 57:

24 Եկեղեցիների հատակագծերը հանված են Ս. Միքոյանի «Փարաքար» գրքից:

25 Ավանդատնյակում դրված են նաև մի քանի խաչքարակ քարեր՝ առանց արձանագրության և թեմի «վեմ քար» հիշեցնող քար՝ 0,94 x 0,50 x 0,47 չափերով:

Խաչքարերից մեկը ( $0,76 \times 0,50$ ) բավականին լավ է պահպանված, և ըստ ամենայնի՝ եկեղեցու որմերին ազուցված կոթողներից մեկն է եղել: Քարի կենտրոնում գեղաքանդակ հիմնախաչն է, որի ստորին մասում եղնդատառ միատող հիշատակագրությունն է.



ԽԱՉՍ ԽԱՉԱՏՈՒՐ ԵՊՀԻՍ ԿՈՊՈՒ ՍԻՆ:  
Նկ. 5

Խաչքարը ձոնված է Խաչատոր եպիսկոպոսի հիշատակին, որը, հավանաբար, Մայր Աթոռի բարձրաստիճան հոգևորականներից է, եւ ինչ-որ կերպ առնչություն է ունեցել հիշյալ եկեղեցու հետ:

Մյուս՝ համեմատաբար փոքր չափերի ( $0,40 \times 0,31$ ) խաչքանդակ քարը դրված է նախորդի մոտ, որի ստորին ձախ անկյունը կոտրված է, ինչի հետևանքով վնասվել է արձանագրության սկզբնամասը: Վյն ևս, հավանաբար, նախկինում ազուցված է եղել: Թվականը խաչի ստորին մասում է, իսկ բուն արձանագրությունը՝ ներքին եզրագոտուն, միատող.



ՈՒՀԴՆ. (1825)  
...ՍԱՐ(Ս)ՈՒՄԵ ՑԻ

Նկ. 6

Քարաբեկոր (մոտ  $0,20 \times 0,30$ ), գիրը՝ Երկուող.



...ԱՇՏԱՐ...  
...ՏԻՍ ՎԱՐ...

Նկ. 7

Առաջին տողում ընթերցվում է «ԱՇՏԱՐ» տառաշարքը, ինչից ենթադրում ենք, որ այն Ներսես Աշտարակեցու օրոք իրականացված աշխատանքների մի վկայագիր է: Երկրորդ տողի «ՏԻՍ ՎԱՐ» տառակապակցությունները թույլ են տալիս ենթադրել, որ այստեղ պետք է որ հիշատակված լիներ ուն Ավետիս վարդապետ:

Առանձնանշելի է Ս. Աստվածածին եկեղեցու բակի հարավարևելյան

անկյունում կանգնեցված խաչքարը (1,77 x 0,92), որը թվագրվում է թերևս Ձ.-Ժ. դդ. (նկ. 8): Նախկինում խաչքարը մեշտեղից թեքությամբ կոտրված է եղել: Բարերախտաբար, ներկայում այն ամբողջացված է և առանձնահատուկ տեսք է հաղորդում հուշարձանին: Տեղացիները պատմում են, որ խաչքարին վերագրվել են նաև բուժիչ հատկություններ:


Փարաքարի մյուս եկեղեցին Ս. Հարությունն է, որը գտնվում է Երևան - Վաղարշապատ մայրուղու աջ եզրին՝ գյուղի արևելյան կողմում: Ըստ պահպանված տեղեկությունների՝ Ս. Հարություն եկեղեցին վերակառուցվել է Ի. դ. 50-ական թթ.<sup>2</sup> իր հիվանդ երեխայի փրկության մասին երազ տեսած եղողու (Համո պապի) և համայնքի միջոցներով: Եկեղեցու շինարարությունը շարունակել է Երևանաբնակ Հոռնան հայրիկը: 1992 թ. Արարատյան թեմի առաջնորդ Գարեգին Ներսիսյանի (ներկայիս Գարեգին Թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի) օրինությամբ եկեղեցին վերաբացվում է, իսկ 2004 թ. ամերիկահայ բարերար Զորշ Լեյելյանի միջոցներով և Լևոն Ռևյան-Շնունյանի վերահսկողությամբ այն հիմնովին վերանորոգվում է<sup>26</sup>:

Եկեղեցին ունի բազիկաձև (երկայնական) հորինվածք, որի հարավային և հյուսիսային որմերի մեջտեղում առկա ուղղանկյուն եղուստները սրահը բաժանում են երկու հավասար մասի: Ավագ խորանի երկու կողմում ուղղանկյուն հատակագծով ավանդատներն են, որոնցից ձախ ավանդատնյակի մուտքի ձախ որմին ագուցված է Ձ. դարով թվագրվող մի խաչքար (նկ. 9): Վերանորոգումների ժամանակ եկեղեցու հարավային կողմում կուտակված քարերի մեջ հայտնաբերվել է մի քարարեկոր, որի գարդարանդակները ևս թվագրվում են Ձ.-Ժ. դդ.: Եկեղեցու միակ մուտքը արևմտյան կողմից է, որին կից է ութասյուն ռոտոնդայով գանգակատունը՝ կառուցված 1984 թ.<sup>2</sup> Վարպետ Կարապետ Բուռնազյանի կողմից, որի մասին վկայում է զմբեթատակ շրջանի (ներքուստ) վիմագիրը. «Զանգակատան վարպետ և հեղինակ Կարապետ Բուռնազյան, 1984 թ.»:

Հիշյալ շրջանում են կառուցվել նաև եկեղեցու հարավային պարիսպը՝ կամարաձև մուտքով, իսկ մնացածը պահպանվել է հնից: Մուտքի վրա տեղադրված քանդակագրդ խաչն, ըստ սալաքարի արձանագրության, 2010 թ. եկեղեցուն են նվիրել տեր և տիկին Սիմոն և Մարի Ղազիկյանները:

Եկեղեցու շրջակայքը բարեկարգ է ու կանաչապատ, որի հարավային կողմում՝ այգու մեջ, կանգնեցված է մի գեղաքանդակ խաչքար: Համաձայն պատվանդանի արձանագրության՝ այն եկեղեցուն է նվիրել Հարություն Հովհաննիսյանը՝ 2007 թ., իսկ զանգակատան հյուսիսարևմտյան անկյունում

կանգնեցված գեղաքանդակ խաչքարը 2010 թ. եկեղեցուն են նվիրել տեր և տիկին Ռուբեն և Ռիտա Նավասարդյանները:




Եկեղեցու արևելյան կողմում գերեզմանոցն է (նկ. 10), որտեղ առկա է թվով 20 տապանաքար՝ դասավորված երկու շարքով: Դրանցից տասներկուսն օրորոցածն են, մենացածը՝ ուղղանկյունաձևն, ութը՝ արձանագիր, երկուսն ունեն նաև պատկերաքանդակներ: Ս. Միրզոյանը նշում է, որ եկեղեցու «շրջակայքում պահպանված են տուֆակերտ հարթ և օրորոցային տապանաքարեր»<sup>27</sup>, սակայն չի ներկայացնում տապանագրերը: Դրանք թվագրված են ԺԼ.-ԺԹ. դդ., այսինքն՝ եկեղեցին գործել է դեռևս Ի. դարից առաջ՝ ունենալով հոգևոր դաս:

#### *Ս. Հարություն և կեղեցու հատակագիծը*



Օրորոցածն տապանաքարերից (1,66 x 0,40) մեկի հյուսիսային նիստին փորագրված ծավալուն արձանագրությունը ցավոր եղծված է, գրերը լցված են սվաղով և ընթերցվում են առանձին տառեր ու մի քանի բառ (նկ. 11): Մնացած արձանագրությունները ներկայացնում ենք ստորև՝ ժամանակագրական կարգով:

Տապանաքար ուղղանկյունածն (1,55 x 0,63). առաջին շարքի ծախից իննգերդի տապանաքարն է, աչքի է ընկնում քարի կենտրոնում առկա հոգևորականի պատկերաքանդակով, որի վերին մասում երկուող տապանագիրն է.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏՐ ՄԱՐԶ/ԱՐԻՆ,  
ԹՎԻՆ Ո-ՃՃԶ. (1707):

Նկ. 12

«ՄԱՐԶԱՐ» անձնանվան «Ղ» և «Ք» գրերն անկանոն են փորագրված, ուստի չի բացառվում, որ այստեղ գործ ունենք «ԱՄԻՐԱՎՄ» անվան հետ:

Տապանաքար ուղղանկյունածն (1,47 x 0,52), նախորդից ծախ, քարի կենտրոնում կուժ է քանդակված, որի երկու կողմում՝ մեկական հատած նույ, վերևում՝ շրջանածն երկու փոս, որոնք իրենց մեջքին են կրում թռչնակերպ պատկերաքանդակները: Կուժը նստած է քառանկյուն հարթակում պատկերված հավասարաթև խաչի վրա, որի ստորին մասում եռաստող տապանագիրն է.

27 Տե՛ս Ս. Միրզոյան, նշվ. աշխ., էջ 62:



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏՐ ԹՈՒՄԱՆԻՆ,  
ՈՐ ՎԱՐՁԱՆ/ԵՑԱՒ  
ԹՎԱ ԿԱԱՆ ԼԻՆ ՈՒԾՉ. (1737):  
Նկ. 13

Տապանաքար հարյա ուղղանկյունաձև (1,40 x 0,51). առաջին շարքի ծախսից վեցերորդ տապանաքարն է: Գրերը խոշոր են, արծանագրությունը՝ 5 տող.



ԱՅ ՄԵՐԱՊԱՆ  
ՅՐ ԱՅ ԱՐ ՑԻՆ  
ՄԵՐ Դ ԽԱՅ  
ԱՅ Ռ Ռ Դ  
Ց Ռ Ճ Ղ Զ Դ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ/ ՏՐ ԱԶԱՐ ԼԻԱ ՑԻՆ,/  
ՈՐ Է ՈՐԴԻ ԽԱՉ/ԱՅՏՈՒՐԻՆ,//  
ԹՎԻՆ ՈՒԾՉ. (1747) ԻՆ:  
Նկ. 14

«Ազարիա» անձնանունը Հր. Աճառյանը ստուգաբանում է Եբրայերենի Azariah անունից, որ նշանակում է «օգնութիւն Աստուծոյ» (կազմված՝ «օգնել», «Եհովլա» բառերից) և հայոց մեջ գործածված է հնուց մինչև մեր օրերը<sup>28</sup>:

Տապանաքար օրորոցաձև (1,20 x 0,32). առաջին շարքի աջից չորրորդ տապանաքարն է: Գիրը՝ հարավային նիստին, 4 տող: Առաջին և երկրորդ տողերի սկզբնամասը եղծված է, գրերը՝ լցված սվաղով:

Ե Վ Ա Ր Դ Շ Ե Ր Ի Տ Ի Ր Ո Հ Տ Ե Մ Բ Ա Զ Շ  
Մ Ա Յ Ա Ռ Ե Շ Ա Յ Ա Ռ Ե Շ Ա Յ Ա Ռ Ե Շ Ա Յ Ա Ռ Ե Շ  
Մ Ա Յ Ա Ռ Ե Շ Ո Հ Ո Ր Մ Ե Մ Ց Ե Լ Ա Ռ Ե Շ Ա Յ Ա Ռ Ե Մ Ց  
Շ Ա Յ Ա Ռ Ե Մ Ց Ս Ե Բ Դ Ե Մ Բ Ե Ր Ի :


Ե... Ր Ն Վ Ա Ր Դ Ե Ր Ի Շ Ն, Տ Ի Ր Ո Հ Ի Շ Ե Մ Բ Ա Զ Շ / Ի Ս ... Հ Ե Ղ Ա Ի Տ Ր Դ Ե Ր Ի Շ Ա Յ Ա Ռ Ե Շ Ա Յ Ա Ռ Ե Շ Ա Յ Ա Ռ Ե Մ Ց  
Ե Լ Ի Ա Յ Ա Ռ Ե Մ Ց Ո Մ Ի Գ. (1774)/ ԹՎԻ, Ի Յ Ա Մ Մ Ե Մ Ա Ն Ս Ե Բ Դ Ե Մ Բ Ե Ր Ի:

Նկ. 15

28 Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, 1942, էջ 54-55:

Ըստ Էռլեյան, ննջեցյալը Վարդիթերն է, որը Դավիթ քահանայի կողակիցն է:

Տապանաքար հարթ ուղղանկյունաձև ( $1,38 \times 0,60$ ). առաջին շարքի աջից երկրորդ տապանաքարն է: Գիրը՝ 7 տող, տեղ-տեղ եղծված.



ԱՅՍԵՏԱՊԱՆ ... ՀՈՎՃԱՆԿԱՌՈՒ ՅԱՆՈՒՆ  
ՎԵ/ՐԱՅՑԱՑՆԻ, ՅՈՐ Է Ի ԳԻՒՂԵՆ  
ՄԱՐԴ ՄԱԾԵՆԻՍ ՀԱՅՐ Ի ՎԱԽ ԾԱՆԻ  
ՈՒՄ ՅԼ. (1789) ԹՎԻՆ:

Նկ. 16

Տապանագրի ցորորդ տողի վերջին երեք գրերը եղծված են, սակայն հաջորդ տողի սկզբնամասի «ՄԱԾԵՆԻ» տառաշարքը, որը տեղանվան մի բաղադրիչն է, թույլ է տալիս ենթադրել, որ Հովհաննեսը (Յովանէս) Շիրակի Մարմաշեն գյուղից է, մանավանդ, որ հավանական ենք համարում «ՄԱՐ» տառերի առկայությունը եղծված հատվածում: Թեական է մնում թվականի հարցը. ընդունել ՈՒՄ. (1781), թե ՈՒՄԼ. (1789), սակայն այս դեպքում «Ը»-ից առաջ «Յ» է փորագրված, ինչը երկմտանքի տեղիք է տալիս, թեպետ դրանց հաջորդում է «ԹՎԻՆ» բառը, այսինքն՝ գործ ունենք կրնկրեա թվատառերի, այլ ոչ ամսանունի հետ:

Տապանաքար օրորոցաձև ( $1,00 \times 0,38$ ). Երկրորդ շարքի ձախից առաջին տապանաքարն է, գիրը՝ հյուսիսային նիստին, 4 տող.

ՅԱՅ ՏԱՐԱՆ ՅԱՐՈՒՆԻՒ  
ՌԵՐԴԻ ԳԱՅԱՅԻ  
ՈՎՃԱՆԴ ԴՐՈՒՅ ԼԵԱԲԵ  
ՐԱՆ ՏՈՒՐՈՂՄՄԻ  
1838

ԱՅՍԵՏԱՊԱՆ ՅԱՐՈՒՄ Ի ԼԻ ՆԻ/  
ՈՐ Է ՈՐԴԻ ԳԱՅԱՅԻ/  
ՈՎ ՀԱՆԴՊԻՔ ԼԻԵԱԲԵ/ՐԱՆ  
ՏՈՒՔ ՈՂՈՐՄԻ/ 1838:  
Նկ. 17

Տապանաքար հարթ ուղղանկյունաձև ( $1,30 \times 0,60$ ). առաջին շարքի աջից երկրորդն է: Քարի վերին մասում փորագրված է միայն տապանագրերից հայտնի «ԱՅՍԵՏԱՊԱՆ» սկզբնամասը: Այս գերեզմանոցում է թաղված նաև Խաչատոր Հայրապետի Հայրապետայանը (1885-1947)<sup>29</sup>, որը հավանաքար, եկեղեցու հոգևոր սպասավորներից է եղել:

Տապանագրերի քննությունը ցույց է տալիս, որ Փարաքարի Ս. Հարություն եկեղեցին գտնել Ժ. Ժ. դդ. կանոնավոր գործել է՝ ունենալով հոգևոր հովիվ: Տապանագրերի օգնությամբ կարող ենք ամբողջացնել եկեղեցում՝ հիշյալ

<sup>29</sup> Տապանաքարն ուղղանկյունաձև է, գիրը՝ կենտրոնում ագուցված մարմարն սալին:



Ակ. 12

Տապանաքար, 1707թ. Տապանաքար, 1737թ. Տապանաքար, 1747թ.



Ակ. 13



Ակ. 14



Ակ. 11 Տապանաքար, ԺՀ-ԺԹ դդ.



Ակ. 15 Տապանաքար, 1774թ.



Ակ. 16 Տապանաքար, 1789թ.



Ակ. 17 Տապանաքար, 1838թ.




Ակ. 18

Ս. Հարություն Եկեղեցու  
մուտքի աջակողմյան պատը

ժամանակաշրջանում պաշտոնավարած քահանաներից գոնես մի քանիսի անվանացանկը. Տեր Մարգար (վախճ. 1707 թ.), Տեր Թուման (վախճ. 1737 թ.), Տեր Ազարիա (վախճ. 1747 թ.), Հովհաննես (վախճ. 1789 թ.), Հարություն (վախճ. 1838 թ.), Խաչատուր (վախճ. 1947 թ.): Ներկայում եկեղեցու հոգևոր հովիվը Տ. Գեղամ ավագ քահանա Քեսարյանն է:

Գյուղի հյուսիսարևելյան կողմում գերեզմանոցն է, ուր կարելի է գտնել տապանաքարեր (հարթ ուղղանկյունաձև, օրորոցաձև, դագաղաձև)՝ թվագրված ԺՀ. և հիմնականում ԺԹ. դարերով: Դրանք մերօրյա տապանաքարերի հետ են՝ խառն դասավորվածությամբ: Տապանաքարերի մի մասն արձանագիր են, ունեն զարդաքանդակներ՝ խաչի և երկրաչափական պատկերների տեսքով: Տապանագրերը չենք ներկայացնում սույն հոդվածի խնդրից դուրս լինելու պատճառով: Ցավոք, գերեզմանոցի հնագույն տապանաքարերը գտնվում են անմիտապ, բարձիթողի վիճակում, շատերն անգամ տեղահան արված, շրջված ու կոտրատված են:

Ս. Հարություն Եկեղեցու հնության մասին են վկայում նաև մուտքի երկու կողմում պահպանված արձանագիր շինաքարերը: Արձանագրությունը մասսամբ է տեսանելի, քանի որ Եկեղեցու՝ հետագայում շարված արտաքին պատը քողարկում է դրա մի մասը: Ընթերցվում են միայն առանձին բառեր. կարծես թե Աստծուց ողորմություն և օգնություն է հայցվում ոմն Երեմիայի (Վիմագրում՝ Էրեմիա) համար: Ըստ տարերի հնագրության և արձանագրության սկզբնամասի «ՃԼ» գրերն ընդունելով իբրև թվատառերի մաս, Վիմագիրը կարելի է թվագրել ԺԷ.-ԺԸ. դր., 15 տող.



ՇԼ  
ԱՅՆ  
ԵԼԵՍԳ  
ՑՐԴՐ  
ԽԶՈՐ ՆՒ  
ԵՐԱՔ Չ  
ՆԵՑ ՆՐԵՐ  
ՈՒՂՈՂՈՐ  
ՀՖՈՂՈՐ  
Է ՕԳՆՈՒԹ  
ԷՐԵՄԱՆ  
ՈԳԻՒՄ  
ՊԱՄՀ  
ՋԵՂԵ  
ՈՒՄ

ՌՈՂ ՃԼ. (1681՛) ԱՐՏ... / ...ՑԼԵՍԳ.../  
...ՑՈՒ ԳՐԻ... / Ս ԶՕՐՆ Ի... /  
...ԷՈՒ ԶԵԶ... / ՇԵՑ ՏՐԵՐ... /  
...ՈՔ ՈՂՈՐ ՄԻ... /  
... ՎՇՈՂՈՐ ՄԻ... /  
... ԵՇ ՕԳՆՈՒԹ ԻՒՆ... /  
...ԷՐԵՄԱՆ... / ՈԳԻՍ Զ... /  
...ՊԱՂԻՆ... / ԶԵՂԻԵ... /  
...ՈՒՆԵՄ... :

Նկ. 18

Ս. Միրզոյանը գրում է, թե ականատեսները վկայում են, որ Եկեղեցին «շրջապատված է եղել այգիներով, որոնցից մեկի մեջ եղել են գերեզմանաքարեր և մեկ գմբեթավոր կիսաքանդ կառույց։ Այգիների տարածքը հետազոտմ բնակչությանը հատկացրել են որպես տնամերձ և դրանից հետո անհայտացել է գմբեթավոր կառույցը և գերեզմանաքարերը»<sup>30</sup>։

Այսպիսով՝ Փարաքար գյուղի Ս. Աստվածածին և Ս. Հարություն Եկեղեցիների նորահայտ արձանագրությունների ընդհանուր քննությունը լավագույն միջոցն էր անդրադառնալու հիշյալ բնակավայրի պատմությանը, հոգևոր ու մշակութային կյանքին։

<sup>30</sup>Տե՛ս Ս. Միրզոյան, նշվ. աշխ., էջ 62։